Վերին Խոտանան

Բնակչություն՝ 205

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1360 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Հիշատակվում է 12-13-րդ դարերից, Ստեփանոս Օրբելյանի կողմից Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում, ըստ որի վանքին տալիս էր 12 միավորի հարկ: Մտնում է Սյունիք աշխարհի Բաղք Աճանան գավառի, իսկ 19-րդ դարի վերջերին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մեջ:
Այստեղ կա ս. Աստվածածին կիսավեր թաղակապ եկեղեցին /17-րդ դար/, որը եղել է գրչության կենտրոն և ըստ 17-րդ դարի ձեռագիր հիշատակարանների այստեղ օրինակվել են Ավետարանն ու Կանոնագիրքը, ոկողեցու շուրջը կա 14-րդ դարի հուշարձան-դամբարաններ: Այս գյուղից է ծագում Մովսես Խոտանանցի կաթողիկոսը, որի մասին հիշատակում է Առաքել Դավրիժեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2263 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 838 հա, որից՝
- վարելահող՝ 103 հա, բազմամյա տնկարկ՝ 10 հա, խոտհարք՝ 82 հա, արոտ՝ 476 հա, այլ հողատեսք՝ 167 հա
- բնակավայրերի հողեր՝ 77 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա,
- անտառային հողեր՝ 1299 հա, որից անտառածածկ՝ 1282 հա